



Պատասխանատու.
Յովհաննէս Գրիգորեան

ՕՐԱԳԻՐ ՉԲԻՒՆՆԻՑ

Ղամակըն ուղղելի էն
առ. Ղ. Գ. Պալլազարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՄԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՏՄԻՐ

ՉԲԻՒՆՆԻՑ ՇԱՐԱԹ 8 ՆՈՅԵՄԲԵՐ 1880

ԹԻԻ 1157

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՔՂԱՔԱԿԱՆ : Իրանական ազատամարտիկներն չնորհիւ բանտարկութեանց Պ. Բարսէղի իւր նըպատակն արդիւնաւորելու կրժամանէ : Պ. Բարսէղի լիմէրիքի մէջ վերջին բանախօսութենէ զինքն Պ. Տիւրք առաջնորդեց որ վարձակալը չվճարեն այն կալուածի վարձքերը որոյ անխիղճ տնարքն տարապայման գիտնէր կրպնհանին : միանգամայն անընդհատ շարունակին յաւաքող բոլոր երկրին մէջ ստորկանութիւնը յոգնեցնելու համար յիշատկ Հայր Շինի քահանայն բողոքեց հողատնարքը պաշտպանող անգղիական թերթերու դէմ : մանաւանդ կառավարութեան դէմ որ իրականացնող անհիշուելի արիւթիւնը սպառնալից էր նուաճել կրպնհանին : Նոյն միջոցին մէջ, ուր տարապայման բնագոյնիւն ներկայ էր, համահասնութեամբ բնագոյնիւն հետեւեալ որոշումներն .

1. Անգղիական կառավարութեան իբր մեծ իրաւունք կրպնհանին հողային խնդրոյն բարեկարգել անմիջական կանոնադրի մի արգիւղող զհողատնարք տարապայման վարձագին պահանջելէ, և ապահովող եր հարկին ինքի ապագային մէջ հողատնարք կալուածը մշակողին անցնելու վաճառման օրինոք :

2. Կրպնհանին որ պատրաստելի հողային օրէնքն ապահովէ զերկրագործս ունենալ զօրաւոր առններ և իրենց ընտանեկան կարեւոր գետնախնէն արտադրելու չափ բնագործակ հող :

3. Անգղիական կառավարութեան յաւաքողան կիշ և անխիղճ հողատնարք դէմ մեզ պաշտպանելու չուզելուն, կ'արդեմք մեք ինքնին պաշտպանել մեզ : 10-վարձու չբռնելով բնառ ոչ մի

կալուած, որոյ վարձակալն հողատնարք կողմէ անխիղճաբար շարունակած լինի, և ամեն յարաբերութիւն գործընդերք բոլոր անոնց հետ որ սոյն պայմանին կը դիմեն, ջուր պահանջարդ ինքնով նոցա պիտոյքն հայրթայթող բոլոր ապրանքներն :

4. Սոյն միջոցին կրպնհանի անհիշուելի արիւթիւններն որ Պ. Բարսէղի քաղաքականութեան հետեւեալ համար վերջին քաղաքականութեան հետեւեալ տուած խոստումներն կը դիմեն, և կրպնհանի բնագործող որ այնպիսի երեւոյթանաց անմիջապէս հրաժարուի պահանջներն :

5. Սոյն միջոցին ներկայ կանոնող հազարաւոր վարձակալներն և մշակներն կրպնհանին հողային Միութեան անդամակցել և մէն մի թաղի մէջ սոյն Միութեան ճիշդ կազմել : Բաւայոյ եմք որ իւրաքանչիւր թաղային եկեղեցւոյ քահանայ իւր թաղի ժողովրդոց պիտի օժանդակէ այս սուրբ գործին մէջ :

Սոյն միջոցին հետեւեալ օրը լիմէրիքի քաղաքացիութեան տիտղոսի արձանագիր մի ըստուար բազմութեան առջև Պ. Բարսէղի մատուցաւ : Լիմէրիքի քաղաքացիներն իր ճառին մէջ ըսաւ թէ՛ քաղաքացիութեան սոյն տիտղոսն չնորհում է Պ. Բարսէղի ի նշանակ երախտագիտութեան նորա ջանքից կոր ըրած է իրանտիոյ մէջ և դուրսերը յոգուտ և յոգնութիւն իրանտիոյ անդամաց և սովելոց :

Նոյն օրը կառավարութեան հողային Միութեան իշխանները ամբաստանութեան տակ դրաւ, որպէս գաւազնիք որ կրպնհանի վարձակալներն ստուար բազմութիւն խմբելով և սպառնական լեզու գործածելով և այլն :

— Պահպանողական կուսակցութիւնն ևս քան

զէն հաստատութիւն և շարժում կ'առնու ըրաւ Սաղապի բանախօսութեամբ որք բաւական ծանր և կծու կերպիւ կը դատեն Պ. Կիւտաթընի աշխարհաւարութիւնն, որ սակայն անգործութի կը մնայ իր նշատակն յառաջ մղելու խորհրդոցը մէջ : միեւն անգամ կը յայտնէ թէ՛ Արեւելեան խնդրոյն շուժման մասին Պէրլինի գաշնագիրն գործադրելու համար վերջին ճգամը աշխատելու մտադիր է նոյն իսկ եթէ բոլոր տէրութիւնք քաջութիւն Անգղիա ինքնին գործել կ'ուզէ առանց եւրոպական համաձայնութեան :

ԳԱՂՂԱՔԱԿԱՆ : Ծերակուտի և երեսփոխանաց խորհրդարանի բացումը Նոյեմբերի 9ին տեղի ունեցաւ : Սոյն առթիւ կարգացուած պաշտօնական յայտարարութիւնն կ'ըսէ թէ ոչ-արտօնաւոր Միաբանութեան արտաքսման նկատմամբ գործադրուած օրէնքն կարեւոր էր և ազատութեան ու լիզնի սկզբանց բնառ դէմ չէր : Արտաքին աշխարհաւարութեան մասին ևս խօսելով կ'ըստատէ թէ՛ Արեւելեան խնդրոյն վերաբերեալ զիւնական գրութիւնք, որք ընդօրին խորհրդարանին պիտի ներկայացունի, պիտի ցուցանեն թէ Գաղղիա իւր բռնած հաշտական եղանակուն բնագործող յարդ ու համարում գրաւած է :

Սոյն յայտարարութեան ընթերցումէն զինի Պ. Տրաքիս ուղեց հարցապնդել զկառավարութիւնն արտաքին աշխարհաւարութեան մասին : սոյն հարցապնդումը բնագոյնիւն և խորհրդարանն որոշեց զայն որ ինի գիւնական գրութեանց խորհրդարանին ներկայացման օրը թայց գիւնան ևս իր կողմէ ուղեւոր որ կրթական օրինաց քննութիւնն նախադաս լինի, մերժուեցաւ այս խնդրին, որուն վրայ Պ. Ժիւլ Ֆէրի և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՍԱԿ ՀԱՄԱՐՆԵՐԻԹԵԱՆ

(Տես լրագրոյն 1156 քիւն :

Վառած էին իրոյն կըրակ անոր սրտին մինչև յատակ .
Այնքան ուժգին թափանցեցին ի խորս ուղեղ թագաւորին
Որ իւր տուած կնիք վճռին, տարադրելու ըզիարունին,
Յեարս կ'ընէր միտքը դրաւ, ջնջել իր խօսքն նոր հրամանաւ :
Անոր վրեժ միտքարանաց ամենազօր գեղէն յուզուած,
Արցունքն աչքին գլխիւ մտն մինչ քայլ կ'առնէր սիրակարօտ
Գլ կիւզ զանի և բազմաբար ուղեղաւորել ի սուրբ համբոյր,
Յանկարծ կիւր մի գիւնքն աղայլեց, օհոն ի զայրոյթ իսկ փոխարկեց,
Այս կիրքն ուժգին ուրիշ բան չէր թէ ոչ այն փառքն որ կ'ստիպէր
Բերնէն ելած վրձնուն յարգել : Եւտի սիրտն պատասխանել :
« Բոլոր անցեալ ժամանակին դառն յիշատակը տակաւին
Միտքս է այս : բայց և օհ եմ քու զլալուդ վրայ այժմէն .
Սակայն քաջութիւն քան անիկ : Գի երթալու ժամանակդ է » :

Իմ .

Վ երազարձ ի հովուութիւն

Արքունական օրինակներն թողլով պալատն ու զարդ ուղղին,
Անմիջապէս կ'ընէն անտի տաւրիսին մեր Դարունի
Ընկերացած իր հօրը հետ, որ գեղջկային հագած ըզգեստ
Դաննահառաւ կուրար կ'ողբար իւր զաւակին անկման համար :
Իսկ Դարունի հօրը սրտին ի միջիթար կ'ըսեր . « Հայր իմ,
Դառնանք ի մեր անշուք հիւրիկ, թողլով պալատ և արքունիք,
Դառնանք, կ'ըսեմ, մեր երջանիկ անտառակին խոցեակ բընիկ
Որ թէպէտ զուրկ ի մեծապանծ և բազմաբար վայելութեանց,
Սակայն անմեղ և խաղաղիկ կեանք վարելու է սուրբ վայրիկ :
Թող անտառուն թողունք պալատ, և պալատի պերճանք և զարդ,
Եւ խնդարից զուրկ սպեմ երթանք յանտառուն մեր խուց նըսեմ :
Հոն կը վարենք կեանք բարեհաճ, երթանք, հայրիկ տուր ինձ քո աչք :
Դժուարուզի ճամբաներէն անցան գացին անտառն անշէն ,

Անգ Դարունի կ'առնու նորոգ ճախարակեայ իր ին և բոք,
Ու կը գործէ նստած այն նոյն գետին ափունքն ուր կանխադոյն
Արքայն տեսած էր ի սկզբան և թաղունի բրած ինքեան :
Անգ սիրան հանդարտ ու խաղաղիկ հարիւր անգամ օրը երկինք
Բարձրացուցած իր լոյս աչեր բարեմազիւն կ'ըլլար առ Տէր,
Որհնել յաւէտ իւր ամուսին, երջանկաւէտ և փառադին
Էրնուլ զանի կենք շքեղ և ճոխութեամբ անաւաղեղ :
Գրուանքներով անգամ սընուած կին մի իւր վեհ և մեծապանծ
Ամուսնոյն հետ այսչափ արծարծ գործով ունել չէ տեսնուած,
Իսկ Դարունի իր հոգւոյն մէջ արքային սէրն կ'ըզար անշէն :

Լ .

Դառն փորձ Դ կոչումն ի ստիպութիւն

Բայց թագաւորն ուրիշ փորձ մ'ալ Դարունիին վրայ բանալ
Կամք ընելով անոր հրաման զրկեց որ դայ իւր տեսնան :
Անմիջապէս ել Դարունի եկաւ պալատն արքային :
Ներկայացաւ պարկեշտօրէն . կ'ըսէ անոր իշխանն անդէն .
« Ով Դարունի գիտցած ըլլաս, իմ հրամանս քեզի է այս :
Այն քաջաւորն իշխանութիւն, որուն հետ փառն ի տաճարին
Պրօսկուրու եմ ի հարկէ, կ'ուզեմ որ գոհ ըլլայ քեզմէ :
Կրպնհանին որ ուշադիր բոլոր ճրգունք միշտ անձանձիր
Ընես օգնել իմ ջանքերուն որ հաճելի ըլլամ ուզոյս
Այն եղանակն առարկային որ պիտ' ըլլայ իմ Թագունին :
Արդէն դիտես դու իմ բնութիւն, թող մեծածախ շքեղութիւն
Առատապէս և անխնայ արքայապետ ծախքեր ըլլայ :
Ուստի բոլոր ճարտարութիւնք ի գործ դրենք պարտիս անշուշտ
Չարդարելու համար նորին բընակարանն ի պալատին :
Անգ ճոխութիւն, արուեստ փափիկի, և կիրթ ճաշակ չընաչխարհիկ
Պճնազարդեալ թագաւորէ իմ հրամանս քեզի այս է :
Վերջապէս դէր միտքդ համակ, որ իմ սիրած հարսնքս միակ,
Իշխանութիւն մ'է նորատի, որուն ծառայ ըլլաս պիտի :
Բայց որպէսզի քաջ խելամուտ ըլլաս գործիդ և պարտքերուդ,
Կ'ուզեմ մէյմը քեզի ցոյց տալ զիշխանութիւն իմ վեհապալ :

(Մնացեալն լրագրող քուով :)

իւր գործակիցներն իրենց հրաժարականը տուին։
Երկու օր Դիւանին և խորհրդարանին մէջ հրա-
պարակային բացատրութիւնք ըլլալէ վերի խոր-
հրդարանն իւր վստահութիւնն յայտնեց 297
ձայնիւ ընդդէմ 137ի։

Բաղաձայն Գերմանական իւրիւրիւր։

Կ. Պոլսէն առ Վաթիկան Թեմաքան Գերման Եպիս-
թոսով ուղղեալ հեռագիր մի կը ժամանուցանէ թէ
պապական Հայ եպիսկոպոսք ժողովով որոշած
են աղաչել զՍ. Պապին որ կտրուի չափն Հասուն Կ.
Պոլսի մնայ։

— Համալուրիէն կը գրեն թէ՝ Համալուրիէն Կեդի-
ք Ծայր-նի լրագիրն տէրութեան Համալուրիի վե-
րաբերեալ խնդիրներն անպատէհօրէն քննա-
դատած ինքեւն խափանուեր է։ Սոյն թերթին
խմբագիր Պ. Պոստ, որ սօսիալիսթներուն պարա-
գլուխներէն մին է, իւր քի ջանի ընկերներով
Զուիցէրի մեկներ է, ուր սօսիալական տնտեսա-
կան հրատարակելով Գերմանիայի իւր համախոհ-
ներուն դրկէ։ Այլեւայլ լուրերէ կը հաստատուի
նաե թէ, սօսիալիսթներն իրենց գաղափար Ժո-
ղովներով և գործերով տէրութեան ուշադրութե-
թիւնը իրենց վրայ դարձուցած են։

— Վիէնայի լրագիրներն կը հաստատեն թէ
Պիզմարք իշխանն տէրութեան գործերէ փախա-
հրաժարուիլ կ'ուզէ։ Թէ նորա թշնամիներն
այժմ շատցած են թէ նախարարութեան և թէ
նոյն իսկ արքունեաց մէջ։ Մինչև անգամ՝ գեր-
մանական մի քանի թագաւորներ և իշխաններ
իրենց խօսակցութեանց մէջ սովորական զրոյց
մի ըրած են քսելու Կնա (Պիզմարք) ամեն բան
է։ Իսկ մենք և ոչ մի բան։ Կարգէն անմիջապէս
Գերմանիայի վրայ գերիշխանութիւն կը քանդուի
ձերիցէրիքարուհէ։ (Քաղաք՝ ուր Պիզմարքի ա-
մարանոյք կայ), և նախարարական խորհուրդ-
ներն գործելու կարող չեն։

— Պիզմարք իշխանին առևտրական նախարա-
րութենէ առժամայ հրաժարիլ ուղղել կը շա-
տատէ նաե Նօրք Կեդիք Եպիսթոսի թեր-
թին։ Այս հրաւ է որ իշխանին թշնամիներն
շատցած և հետզհետէ շատնալու վրայ են։ Ա-
պագայն պիտի յայտնէ թէ իշխանն պիտի կա-
րենայ յաղթել անոնց։ Ինչպէս շատ անգամ
ըսած է։

ԱԶԳԱՅԻՆ

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հետեւեալ նամակն և հրահանգն Ս. Երուսա-
ղէմի պարտուց բարձման Յանձնաժողովի կողմէ
ղրկուած են մեզ ի հրատարակութիւն, զորս կը
փութամք իւրեւ հայրենասիրական անձ պարագ-
հրատարակել մեր թերթին մէջ, յորդոր կար-
գալով մեր ազնիւ ընթերցողաց որ կարգան ոչ
թէ իւրեանց հետաքրքրութիւնն գոհացնելու
և մոռնալու համար, այլ ուշի ուշով և լրջօրէն
կարգան, և լաւ թափանցելով պարտականեալ
խմաստիցն խելամուտ լինին կրաց վիճակին և
ստիպող պարագայից ծանրութեան, որոյ ներքե
Ս. Երուսաղէմի մեր ազգային բազմադարեան
սեպհականութիւնն եղող տնօրինական սրբա-
վայրք երկար ժամանակաց ի վեր ստուար պար-
տուց ներքե հեծելէ զինի արդէն ոկոած են Դը-
սեմանալ, և նոյն իսկ վտանգի ենթարկուիլ, որ
ուղղակի ծանր հարուած մի է մեր Ազգի այն
փառաւոր նշանակութեան որով համայն քաղա-
քակրթեալ աշխարհի առջև ծանուցուած և նո-
ցա տիեզերական գրականութեան մէջ իրաւ-
ունք, անուն և տեղ ունեւած եմք։ Ազգ մի, եթէ
իւր գոյութեան կենսական ամենամեծ տարրե-
րէն մին, և առաջինն այն է կրօնք և նորա
սրբազան վառարանն նսեմացեալ, անշուք և
պարտուց ներքե բեկուած տեսնէ, անսնէ զայն
որ տառապեալ այրիի մը նման իւր զորքացու-
ցած զաւակներուն օթանդակութեան ձեռն կը
կարկառէ պաղատանօք, և անտարբեր մնայ։
Ո՛հ, որչափ աններելի է այդ մանուկներէ ներկայ
յառաջդիմական պարագայից մէջ։ Ահա սոյն
ծանրակիւ գործն է, զոր խորին ուշադրութե
առնելով կեդրոնական վարչութիւնն յատուկ
Յանձնաժողով մի կազմած է, որ ամենայն բա-

բենխանձ ոգով կ'աշխատի գարման բերել
այնմ, յորք Դեւելով ընդհանուր Հայ Ազգի անկիւ
և բարեպաշտ զգացմանց և շրջահայեաց լուրջ
հեռանկարութեան վրայ։ Այս միտքին մեր կա-
րեւոր բերիքներն ուրիշ անտէհի թողլով, այս
անաշխտ անգամ յորդոր կը կարգաւոր մեր անկիւ
ընթերցողաց որ խնդրոյն ծանրութիւնն միշտ
աչաղ առջև անկելով՝ կեդրոնական Պատուար-
ժան Յանձնաժողովի հետեւեալ նամակն և հրա-
հանգն յատուկ ուշադրութեամբ կարգան, և
պարտականութեանն խելամուտ լինին Բաղայոյն
եմք որ համայն Ազգն արդարացի և յորմ կարեւոր
պիտի գտնէ զայն։ Եւ ըստ հրահանգին յօժա-
րափոյթ պիտի գտնէ, օգնել իւր լուսնային այն
սրբազան վայրին, ուր ինքն ևս իբրեւ քաղաքա-
կրթեալ Ազգ. նշանակութիւն, անուն, փառք
և իրաւունք իսկ ունի։

... Խմբագրապետ Տէր,

Յանձնաժողովն Ս. Երուսաղէմայ պարտուց
բարձման հանգանակութեան գործոյն նկատ-
մամբ մեղաբարձարաւ ամեն անգամ ին լրագրա-
պետաց նոր հրաւեր մի ի հրատարակութիւն
յանձնած լինելով, հարկ և պատշաճ կը համարի
ներկայ նոյնիմաստ հրաւերն յատկապէս յուղար-
կել նաե Ձեր պատուակն լրագրոյն, ուղղեալ
նոցա ամենեցուն որք իբրեւ Հայ անհատ, ուր
ուրեք որ գտնանին, Ս. Երուսաղէմայ գործոյն
որդ իւրեւոր քանակ յատկապէս համար պարտաւոր
են բարոյապէս և երկրպագութեամբ գործակցելու։

Գնալ գիտեմք թէ այսօր մեր Ազգն միակ չը-
լանակի մի մէջ միացեալ է, որ է մեր Ս. Երուս-
ղայ Եկեղեցական Կաթողիկոսական եւ այն տնօր-
նական Ս. Տեղիք Երուսաղէմայ որ մեր նախն-
եաց չեղեցիւ Երուսաղէմայ Ազգին անցնող քան
և եթէ մեր Ազգն ընդհանուր Ազգաց մէջ սոյն
տնօրնական աստիճան քանակով կը պահածայ, ան
անգործի իրաւամբ է որ վաղուց գիտցած է՝
զնոյն իւր Գրիստոնէական կրօնի վառարանն
ճանչելով, պահպանել և նորոգելու գոտեւորեալ
անվրա պահել նաե իւր ազգ ութիւնն։

Արդ, մեր Գրիստոնէական կրօնին այդ վա-
ռարանն այսօր փոսնգի մէջ է։ Ուստի եթէ
չբարձրաւոր այդ վառարան, մեր Ազգութիւնն
վրառու երթնալով կը լինի մեր անգործ
ութիւնն կրօնքով անվրա և մեր կրօնքն այն
վառարանով պայծառ պիտի մնան ընդհանուր
ազգաց մէջ։

Այս տեսութեամբ ամեն Հայ անհատ իւր ազ-
գին էական նորարեւ պահպանելու համար,
նախապէս և բարոյապէս պարտական է իւր
բաժնին ինկած օգնութիւնն մատուցանել։

Մանուկներն այն յառաջդիմական ժամանա-
կին մէջ եթէ ձեռք բերեմք Ս. Տեղեաց փրկու-
թիւնն, ոչ միայն մեր ազգութիւնն անվրա կը
պահենք, այլև մեծապէս ծառայած կը լինի մեր
Ազգային յառաջդիմութեան, և այս մասնաւոր
պարագայն, զոր Յանձնաժողովն ձեռնարկած
ազգովին հանգանակութեան հաւաքման նոր
եղանակն պիտի անդամայնէ, ըմբռնել զժող-
րին չէ լուրջ և հետաքրքրող մտաց համար։

Այս եղանակն է, որպէս ամեն ուրեք յու-
ղարկեալ Յանձնաժողովոյն հրահանգներէն կը
տեսնուի, ներկայ 1880 տարին սկսեալ երեք
տարի անկէ Հայ անհատ տարեկան 3 արծաթ
գահեկան նուէր հաւաքել։

Յանձնաժողովն ջանից նպատակն է՝ այսպի-
սի ժամանակի մէջ յապաղման գուռ չ'իջողու-
քանդի անկեր և իրողութիւն մ'է թէ կրօնի
ժամանակն անդուլ, իւր շրջանն միակերպ բե-
լով, բայց իւր ազգացութիւնն Ազգութեան
վրայ չ'ընէր միակերպ, այլ տարբեր տարբեր
ներգործութեամբ՝ որ օգտուէտ կամ փոստ-
բեր արգիւնը կը լինի անգործի եւ անգործի
անտարբերութեան։ Եւ ամեն ոք գիտէ թէ
այսպիսի ժամանակի յարգն ճանաչել և օգտա-
ւէտ արդեանց պարտաւորել զայն, իրականա-
պէս ճանաչել և ազգային յառաջդիմութեան հա-
մար մեր անհատ պարտականութիւնն։

Այս տեսութեամբ և համաձայն կը գտնուի վե-
րոյն Յանձնաժողովն Ձեր պատուական լրա-
գրոյն և ոյր միջոցաւ առհասարակ ազգայինս, և
կ'աղաչէ զամենեւին որ առանց ժամանակի կո-

րստեան, ընդհանրապէս օգնու քաղեմք ան-
տի, և անանջադրեալ կը լին արդեանց տեսա-
կետով փութացնելու ներկայ հանգանակութե
գործոյն անգործութեան, որ ամեն երկրի մէջ
ամեն ազգք իւրեանց յառաջդիմութեան պար-
տական են այն գիտակցութեան որով կը գիտ-
նան Գրիստոնէական օգնութեամբ։

Այս գիտակցութեամբ, Յանձնաժողովն սոյն
ձեռնարկեալ հանգանակութեան մի արագ և
հզօր մղումն տրուել անհետ ժամանակով և
մանակիս ստիպող պահանջներէն մղեալ, կը
հարկադրի այս անգամ այս աղաչանքն ընել
կրկնելով իւր նախկին հրահանգն և անձիւր Հայ
անհատի նիւթական և բարոյական մասնակցու-
թիւնն ինքեւն սոյն ձեռնարկին նկատմամբ,
ոյր ըրձակեան՝ Ազգին արդարաւոր փոխից
նպատակ շարժելու Երուսաղէմայ Եկեղեցին։

Ի վերջէ, Յանձնաժողովն վստահութեամբ կը
յուսայ որ Ձեր Մեծապատուութիւնն միեւնոյն
փափաքով և յօդուալ Ազգի շնորհ կ'ընէ ներ-
կայ հրահանգն հրատարակելով հանգործ, իւր
խմբագրական յորդորանքն ևս այս մասին առ
համայն ազգայինս մեր ուղղել ներկայ առթիւ
որպէս և այլ անգամներ երբեմնակի հրատարա-
կութեամբ Ազգանուէր լրագրոյդ մէջ։

Հանգանակութեան նորարար հրահանգէն մի
օրինակ ընդ գրեցէ կ'ուղարկեմք և կը ինքեւն
որ ներկայ հրահանգին հետ հրատարակել հանգործ

Մնամք յարգանք ի Գիմայ

Ս. Երուսաղէմայ պարտուց բարձման

Յանձնաժողովն

Պ. Առեւանդարի Առեւանդարի

Սեկրետարի Մանուկեան Յով. Կիւմարեան

Կ. Պոլս, 17 Հոկտ. 1880։

ՆՐԱՆՆԵՐ

Ս. ԵՐՈՒՍԱՂԱՅԻՄԱՅ ՊԱՐՏԱՐԱՅ ԲԱՐԶՄԱՆ

ՅՈՒՆԱՆԱԿԱՆԱԿԱՆ

ՀԱՆԳԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գործած 1. Ինչպէս որ Բարձրանորհ Տ. Տ.
Ներսէս Ս. Պատրիարք Հայրք կը իշխանակէ իւր
շնորհագիր կոնգրակին մէջ, ամեն Հայ անհատ,
անանջ քեզի, և իւր և հասկի խորհրդէն, հրաւեր-
եալ է յօժարակամ մասնակցելու Ս. Երուսաղի-
մայ պարտուց բարձման, երեք տարի տնօր-
նական 3 արծաթ գահեկան նուէր անելով, սկսեալ
1880 տարին։

ՊԱՐՏԱՐԱՅԻՆ ԾԱՆԿԵՐՈՒ

Գործ 2. Թողական խորհուրդները հանգանա-
կութեան գործողութիւնը սկսելէ անալ, երկու
տեսակ յանկ պատրաստելու են (յանուկ անա-
րակի մէջ)։

Այս մասին իրենց առաջին գործն է՝ հանել
թաղին Միւրալ, կամ Գեղեւ, կամ Գեղեւ, կամ
Բեւալ (ըստ տեղոյն), և անոնց իբր օրինակ յանձ-
նելով Հրահանգին քովի երեք տարած ցանկը,
պահանջելով ճիշդ անկապէս պատրաստելու զանոնք
Առանց առաջինն է՝ իրենց թաղին մէջ գտնուած
բոլոր ազգային ընտանեաց մէկ ընդհանուր ցանկ,
ամեն մէկ ազգին սկիզբը, (Իւր և հասկի) սկսեալ
կին մէջ կարգաթիւ (սկսեալ հոգեւոր) զեւելով,
և զայն հետագայէ մինչև վերջը շարունակելով,
ինչպէս նաե յանուկ սկսեալ սկսեալ մէջ նշանա-
կելու են ընտանեաց գիտակցութեան անունը, մա-
կանունը, տան փողոցին անունը և տան թիւը
(եթէ կայ)։

Երկրորդ օտարազգի ընտանեաց ծառայող
անհատաց, ինչպէս նաե պանդուխտ կամ անտա-
ցի մեծակեաց ազգացն մէկ հասարակ ցանկ, ա-
մեն մէկ տղին սկիզբը (Իւր և հասկի) սկսեալ
մէջ կարգաթիւ զեւելով, ինչպէս նաե անհատին
անունը, մականունը, բնակութեան տեղը և
տան կամ անունին թիւը։

Պատրիարք և տեղացի մեծակեաց ազգացն Պոլս
մէջ կը գտնուին։ Բայց շատ զաւառներու մէջ չ'կան։

Գործ 3. Յիշեալ երկու ցանկերը պատրաստե-
լէն ետքը, ընդհանուր ցանկին մեր խրկած քանակի
ցանկերն զրայ օրինակելու է քանակն ընտանեւ
(այսինքն 15 մինչև 20 մէկ տանեկի յանկին
վրայ, 115 մինչև 20 երկրորդ մը վրայ, և
այսպէս շարունակելով), որոշեալ սկսեալներուն
մէջ ընտանեաց թիւը, գիտակցութեան անունը, մա-

կանոնը, տան փողոցին անուրը և տան թիւը նշանակելով:

Եթէ 10էն նուազ ընտանիք մնայ՝ նոյն մնացորդը որքան որ է, 9, 8, 7 և այլն, անոնք ալ զատ տասնեկի ցանկի մը վրայ գրուելու են:

Թօր. 4. Թաղական խորհուրդներն ընդհանուր ցանկերը պատրաստելու ատեն՝ (Բի-անհատից ա-ր-է-4) սիւնակին մէջ բուն մը գրել տալու է են: Սակայն առաջին հաւաքին իրարմ հաւաքե-լու ատեն ընտանեաց արու և էգերը տասնեկի ցանկին յատուկ սիւնակին մէջ նշանակելու են:

Թօր. 5. Քահանայք պարտին նախ՝ 2. յօդուածի մէջ նշանակել մասնաւոր ցանկին պատրաս-տութեան օգնել, եթէ թաղական խորհուրդ-ներն այս մասին հրահանգ չեն տան իրենց: Երկ-րորդ՝ իրենց ծովերուն եղող ընտանեաց ամեն մէկ անհատներուն՝ այր թէ կին, թուովը, ա-նուններովը և մակնունդներովը միատեղ, մի ցանկը պատրաստել և ներկայացնել թաղական խորհրդոց:

Քահանայք իրենց ծովերու ցանկերը մասնաւոր ցանկին նման պծուած թղթի մը վրայ պատրաս-տելու են:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՈՐՈՂՈՒԹԻՒՆ ԶԱՄԱՐԱՅ

Թօր. 6. Իւրաքանչիւր թաղական խորհուրդ, ընդհանուր և տասնեկի ցանկերը պատրաստել տալէն ետքը, թաղին մէջ գտնուող ընտանեաց անհատներու նուէրները պիտի կարենայ հաւա-քել նախ միայն երէտ տեսակ հաւաքելով: Զեռօք որոնք պիտի կըշտին Առաջին, երկրորդ և երրորդ հաւաքին:

Առաջին կըշտի այն հաւաքներուն, որոնց 1էն մինչև 10 ընտանիք կը յանձնուին, ատենք են բուն նուէր հաւաքողները:

Երկրորդ կըշտի այն հաւաքներուն, որոնց մինչև 100 ընտանիք կը յանձնուին, ատենք կըշտ-րեն իրենց ստորակարգեալ Առաջին հաւաքին: Երկրորդ կըշտի այն հաւաքներուն, որոնց մինչև 1000 ընտանիք կը յանձնուին, ատենք կըշտեն իրենց ստորակարգեալ երկրորդ հաւա-քին:

Թօր. 7. Եթէ թաղի մը մէջ 1էն մինչև 10 ըն-տանիք գտնուին, թաղական խորհուրդը միայն թաղին հաւաքէ մը կ'ընտրէ, և անոր կը յանձնէ նոյն ընտանեաց տասնեկի ցանկը և պէտք եղա-ծին չափ տոմսակներ:

Թօր. 8. Առաջին հաւաքին իրեն յանձնուած ընտանեաց ամեն մէկ անհատէն յիշեալ 3 ար-ծաթի գահական նուէրք տարին մի անգամ հա-ւաքելով: Կը յանձնէ թաղական խորհուրդին:

Թօր. 9. Առաջին հաւաքին ամեն մէկ ընդհա-նած 3 արծաթի գահականի փոխարէն Ս. երու-նադիմայ արծաթ և Յանձնած ընդհանր կիւնքե-րով վաւերացեալ արծաթ մը պիտի յանձնէ լծարդէն, թէ տոմսակին և թէ բունին (թօշտի) վրայ գրե-լով նուիրատուին անունը, մակնունքը, գաւա-ռին, գիւղին և թաղին անունը և անոր տակը տարւոյն թուականը:

Թօր. 10. Եթէ թաղի մը մէջ մինչև 100 ըն-տանիք գտնուին, թաղական խորհուրդը միայն երկրորդ հաւաքէ մը կ'ընտրէ, և անոր կը յանձնէ իւրոր ընտանեաց տասնեկի ցանկերը, ինչպէս նաև պէտք եղածին չափ տոմսակներ և տոմսա-կի ստացանք իրեն:

Թօր. 11. Երկրորդ հաւաքին իրեն յանձնուած ամեն մէկ տասնեկի ցանկի, այսինքն 10 ըն-տանեաց մէջէն, մէկ մէկ Առաջին հաւաքէ կ'ընտ-րէ և ամեն մէկուն կը յանձնէ տասնեկի ցանկ մը և պէտք եղածին չափ տոմսակներ:

Թօր. 12. Այս պարագային մէջ ընտրուած Ա-ռաջին հաւաքին հաւաքած նուէրը կը յանձնէ զինքն ընտրող երկրորդ հաւաքին, և սա ալ թաղական խորհուրդին:

Թօր. 13. Եթէ թաղի մը մէջ մինչև 1000 ըն-տանիք գտնուին, թաղական խորհուրդը երկրորդ հաւաքէ մը կ'ընտրէ, և անոր կը յանձնէ բոլոր ըն-տանեաց տասնեկի ցանկերը և պէտք եղածին չափ տոմսակներ ու տոմսակի ստացագիրներ:

Թօր. 14. Երկրորդ հաւաքին իրեն յանձնուած տասնեկի ցանկերը տասն առ տասն բաժնելով, ամեն մէկ բաժնի, այսինքն 100 ընտանեաց մէ-ջէն, մէկ մէկ երկրորդ հաւաքէ կ'ընտրէ և ամեն մէկուն կը յանձնէ 100 ընտանեաց տասնեկի

ցանկեր, և պէտք եղածին չափ տոմսակներ ու տոմսակի ստացագիրներ:

Թօր. 15. Երկրորդ հաւաքին ընտրուած երկ-րորդ հաւաքին մը, ըստ 11 յօդուածի կ'ընտրէ իրեն ստորակարգեալ Առաջին հաւաքին:

Թօր. 16. Երկրորդ հաւաքին ընտրուած Ա-ռաջին հաւաքին նուէրներն ամեն մէկը, իրեն յան-նուած 10 ընտանեաց նուէրներն, ըստ 9 յօդ-ուածի հաւաքելով պիտի յանձնէ իրենք ընտ-րող երկրորդ հաւաքին, երկրորդ հաւաքին ալ զինքն ընտրող երկրորդ հաւաքին, և սա ալ թաղական խորհուրդին:

Թօր. 17. Եթէ թաղի մը մէջ 1001էն մինչև 1010 ընտանիք գտնուին, ան ատեն թաղական խորհուրդը մէկ երկրորդ և մէկ Առաջին հաւաքէ կ'ընտրէ:

Թօր. 18. Եթէ մինչև 1100 ընտանիք գտնուին մէկ երկրորդ և մէկ երկրորդ հաւաքէ կ'ընտրէ:

Թօր. 19. Եթէ մինչև 2000 ընտանիք գտնուին երկու երկրորդ հաւաքէ կ'ընտրէ:

Թօր. 20. Ինչ 2000էն աւելի ընտանիք գտնե-լող տեղւոյ մը թաղական խորհուրդը սոյն Հրա-հանգին արմատաւորութեանց հետևողութեամբ, կրնայ գտնել ընտրել գործողութիւնը:

Թօր. 21. Եթէ երկրորդ հաւաքին մը յանձնե-լած ընտանեաց թիւը ճիշդ տասնի չափնուի, օրինակի համար 68 ընտանիք ըլլայ, և օրը Ա-ռաջին հաւաքին ընտրելով, վեցին 10-ական, և միոյն մնացորդ 8ը կը յանձնէ:

Թօր. 22. Նոյնպէս եթէ երկրորդ հաւաքին մը յանձնուած ընտանեաց թիւը ճիշդ 100ի չափ-նուի, օրինակի համար 376 ընտանիք ըլլայ, 4 երկրորդ հաւաքին ընտրելով, երեքին 100 ա-կան և միոյն 76ը կը յանձնէ: (Տես յարակից աղիւսակը):

Թօր. 23. Թաղական խորհուրդները ընդհանուր և մասնաւոր ցանկերը որոն ձեռքով որ պատ-րաստել տան, օտարազգի ընտանեաց ծառայող (չայ) անհատներու, ինչպէս նաև թաղին մէջ գտնուող պանդոխտ և մենակեաց ազգայնոց նուէրներն ալ անոր հաւաքել պիտի տան:

ՏՈՍՍԱԿԻ

Թօր. 24. Յանձնած աղով իւրաքանչիւր ընտա-նիքը 10ական անգամ ենթադրած և ըստ այսմ՝ տոմսակներ խրկած է. ուստի եթէ խրկուած տոմսակները պակաս գան, պէտք է որ Յան-նածողութեան անմիջապէս խնդրուի. իսկ եթէ ա-ւելի գան, պահուելով, Յանձնած. ծանուցուի: Թաղական խորհուրդներն իրենց թաղին ընտան-եաց անհատներուն ենթադրական թիւէն աւելի տոմսակներ յանձնելու են հաւաքներուն, ինչ-պէս նաև երկրորդ հաւաքներն ալ երկրորդ հա-ւաքներուն և երկրորդ հաւաքներն ալ Առա-ջին հաւաքներուն, որպէսզի տոմսակները պակ-սեղով իրարմ նորէն ուղելու հարկ չմնայ:

ԴՈՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՈՍԱԿԻ

Թօր. 25. Թաղական խորհուրդները, հաւաք-ման գործողութիւնը աւարտելէ ետքը, առա-ջին հաւաքներուն տասնեկի ցանկերուն (Բի-անհատից ա-ր-է-4) սիւնակին թիւերը ընդհանուր ցանկին որոշեալ սիւնակին մէջ փոխադրելով, Յանձնածողութեան հաշիւ տուած ծանուակ ընդ-հանուր և մասնաւոր ցանկերուն մէկ մէկ օրի-նակները խրկելու են, բնագիրներն ինչպէս նաև տոմսակներուն բունները իրենց քովը պահելով:

ՅԱՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՈՍԱԿԻ

Թօր. 26. Առաջին ցանկերը, Գործողները կամ աւարտելէն ետքը կոնգրակը կարգաւոր ատեն և հանգանակութեան միջոցին քանի քանի ան-դամներեկեղեղայն ատեններն բնականաբար այս մասին յորդոր պիտի կարգան ժողովուրդին:

Այս յորդորներն ընելու ատեն յիշելու են նաև թէ ամեն մէկ անհատ իրեն տոմսակ ներ-կայացնող առաջին հաւաքին վճարելու է իւր նուէրը:

Թօր. 27. Նուիրատուները իրենց առած տոմ-սակները պահելու են, որ հարկ եղած ատեն հաւաքներուն ցուցնեն:

Թօր. 28. Ինչպէս թաղական խորհուրդները, նոյնպէս և երկրորդ և երկրորդ հաւաքները իրենց ընտրած հաւաքներուն տոմսակ յան-նած ատեն, պարտին տոմսակի ստացագիր առ-

նել, ընդհանուր և մասնաւոր ցանկերը, որոն մէջ նշանակուած պիտի ըլլան յանձնուած տոմսակին հաւաքները, արժէքներ և օր-ան թուականը:

Հետեւաբար ամեն կարգի հաւաքին զինքն ընտրողին թէ ստակ և թէ աւելցած տոմսակ-ներն ու սպառեալ տոմսակաց բունները յան-նած ատեն, պարտի տուած ստացագիրն է պա-նել, և կամ անոր ետեւի կողմը յանձնած ստա-կին կամ տոմսակին որչափ ըլլալը նշանակել:

Թօր. 29. Առաջին հաւաքները ազգային ըն-տանեաց ծառայող (չայ) սպասաւորները և ըս-պասաւորները նոյն ընտանեաց անհատներու թիւին վրայ յաւելցելով, նուէրներն ընտան-եաց պիտակներին միջոցաւ իրենցմէ պիտի առ-նուն, և ծանօթ-նելու սիւնակին մէջ պիտի նշա-նակեն անոնց քանի արու և էգ ըլլալը:

Թօր. 30. Տեղափոխութիւն ընող կամ առժա-մանակեայ կերպով ուրիշ տեղ մը բնակութիւն հաստատող ամուսն ընտանիք մը, կամ ընտան-եաց մէկ մարդ, իրեն գտնուած տեղը ներկա-յացած առաջին հաւաքին վճարելու է իրեն նուէրները:

Թօր. 31. Թաղի մէջ հանգանակեալ ընդհա-նուր գումարին հարկերն երկուսէն ըստ 2 յօդուածի ցանկերը պատրաստող անձին, հա-րկերն երկուսէն ըստ 3 յօդուածի ծովերու ցան-կերը պատրաստող քահանայից վճարուելէն ետ-քը, հարկերն առաջ ալ նոյն թաղի թաղային ստակին պիտի մնայ:

Հետեւաբար թաղի մը մէջ հանգանակեալ ընդհանուր գումարին հարկերն 88 1/2ը սուրբ երուսակիմայ պարտուց բարձման Յանձնածող-վոյ արմատաւորութեան ներքե պիտի դրուի:

Թաղական խորհուրդները թիւ ընդհանուր և մաս-նաւոր ցանկերը պատրաստող անձին և թիւ քահա-նայից դրամ վճարած ատեն ստացագիր առնելու են:

Թօր. 32. Եթէ որոշեալ 3 արծաթ գահական նուէրի փոխարէն ժողովուրդին կողմանէ դրա-մի տեղ ուրիշ բան տրուի, թաղ. խորհուրդը ազատ են տրուածն առնելու, և վաճառելով՝ արդիւնքը Յանձնածողութեան ուղարկելու:

Թօր. 33. Թաղական խորհուրդները Ս. երու-նադիմայ անուան տրուած 3էն մասնաւոր նուէր պարտին ընդհանր և նուիրատուին ստացագիր մը տալ, և ապա Յանձնածողութեան տեղեկագրե-լով հաղորդելի որոշման սպասել:

Կ. Պոլս, 11 Յունվար 1880

Ի դիմաց Ս. երուսակիմայ պարտուց բարձման Յանձնածողութեան

Վ. ԱՏԵՆԱԳՐԻ ԱՏԵՆԱԳԵՏ

Սեմեթրիմ Մանուկեան Յովհաննէս Կիւմշեան

Կ Ո Ս Ա Ն Դ Ե Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

Գրգահան անպատմութիւն և Պարսկական սահմաններն ըրած արշաւանքն Բ. Դրան նախա-րարաց մէջ մտահոգութեան աւարկայ եղած է, և լրագիրը կը հաստատուն թէ Բ. Դրան այն դատաւաց մէջ մտնելու բարեւոյններն փու-թացնելու միջոցներ ձեռք կ'առնու:

—Տուրքիոյ յանձնումը խաղաղութեամբ կարգադրելու մասին Տէրվիշ բաշայի ի դործ դրած միջոցներն ընդհուպ պիտի յաջողուին, կ'ըսուի:

—Քիւմշեան ունի գնդապետն սպաննող վե-լի Մէհմէտ անուն անձին վրայ քննութիւն եղած և մահուան դատարանի տրուած էր: Այս անգամ տէրութեանց գնդապետներն հաւաքա-կան ծանուցագրով մի Բ. Դրանէն պահանջեր են յիշեալ վճարն անյապաղ գործադրութիւնը:

—Գրգահան արշաւանքի զապելու համար, եւրոպական լրագիրք կը ծանուցանեն թէ Պար-սից Շահն Ռուսիոյ օգնութիւնը ինքերբ և մին-չև մէկ արտիստն նպատաւոր պատասխան ըն-դունելու է:

—Թէրքիական Հաֆաթ Թուրք լրագիրն Անգղի-ական դեպուտի Պ. Կոչընի համար անպատշաճ լեզուաւ գրած ինքնուր բարձրագոյն հրամա-նաւ գաղարման դատապարտեցաւ:

—Գերմանական դեպուտատ Հաճֆէլտ կոմսն երբ կառքով զիշերային այցելութեան մի կ'երթար թաշ դըշլայի գործանոցին սպայներէն 5 հոգի, որը գինով և վէճի բռնուած էին, յարձակեցան

նորա կառ. քին վրայ, ձերեկն մին վիրաւորեցին
կառաւարտ վար առին, բայց իմանալով թէ
կառ. քին մէջ նստողն դէրմանական գետնան
է, նորա անձին գէտ ոչինչ թշնամանք չըրին,
հայտերական հրամանաւ թաշ գըլլայի մէջ գին-
ուորական ասեան կազմուեցաւ յանցաւորներն
պատժելու համար:

— Լրագիրք ոմանք կը ծանուցանեն թէ ոստի-
կանութիւնն արգիլած է թագաւորաց և բարձ-
րաստիճան անձանց պատկերներ կրող սիկառի
թուղթեր, և լուցափայտի տուփեր վաճառել:

— Այս տարի Մէքքէ գնացող ուխտաւորաց
թիւը 80,000ի հասեր է:

— Փռնչն մէջ հետեւեալ կը կարդաւք:

Ամերիկայի հանրապետութեան նորընտիր նա-
խագահ զօրապետ Կարֆիլի կենսագրութիւնն
է հետեւեալն, յորմէ կիմացուի թէ մարդիկ ան-
դու և անձանձիւ աշխատասիրութեամբ որչափ
կյառաջանան և կրարձրանան: Զօրապետ Կար-
ֆիլի Օհայօ նահանգին Օրանց քաղաքին կող-
մերը փոքրիկ ագարակի մը տիրոջ որդին է, և
այժմ 49 տարեկան: Կարե յոյժ աշխատասէր
և հաստատամիտ լինելով իւր տղայ հասակին
մէջ հօրը արած կաշխատէր, և ձմեռներն ալ
կահայարգարի արհեստ կուսանէր: Թէ այս ար-
հեստին, և թէ ջրանցքի մը վրայ նաւաձիգ շո-
գենաւի մը մէջ աշխատելուն շնորհիւ՝ մաս մը
գրամ հաւաքեց և անով գպրոց մը մտաւ:
Ինչոյ վերջամաս— Բոլէճ անուն վարժարանը
մտնելով երկու տարուան մէջ առաջին աստի-
ճանի վկայագրի արժանացաւ: Աշակերտակից-
ներն մինչև ցարդ կը յիշեն մարմնամարդութեան
մէջ նորա ունեցած յաջողակութիւնն ու ճար-
տարութիւնը: 1858ին, Հիւսթն— Բոլէճ վարժա-
րանին մէջ ուսուցիչ, և անպիստօրէն կարգե-
ցաւ: Այս միջոցին, Կրնաւագիտութեան մէջ
մեծ յառաջադիմութիւն ըրաւ: 1859ին, Օհայօ
նահանգին ծերակոյն ժողովին անդամ ընտ-
րուեցաւ: Ի վերջոյ, հարաւայնոց աստուաթու-
թեան ժամանակ, գերութեան գէտ լինելուն
պատճառաւ՝ գերութեան ջնջման համար պա-
տերազմող հիւսիսայնոց կամաւոր գունդերուն
մէջ մտնելով՝ պնդապետ անուանեցաւ և ապա
երեք պատերազմաց մէջ ցուցած քաջութեան
շնորհիւ՝ զօրապետութեան աստիճանի բարձրացաւ:

Պատերազմին ժամանակ երեսփոխանական
ժողովոյ անդամ ընտրուելով՝ անկէջ ի վեր միշտ
երեսփոխան ընտրուած է: Անցեալ Յունվարին
ալ Միացեալ Նահանգաց աւագաժողովին ան-
դամ կարգեցաւ: Զօրապետ Կարֆիլի զօրա-
ւոր կազմուած ունեցողանձ մ'է՝ մեղերը ճեր-
մկնալ սկսած են: Խաբերը՝ կապիտ, այտերը՝
լեցուն, և բաւական վայելադէմ է: Առաջի-
կայ փետր. 18ին կրազմի Ամերիկայի հանրապե-
տութեան նախագահական աթուր, անշուշտ
ազգային ժողովոյ կողմանէ կարեւորութիւն չը-
տրուելով՝ ռամկավարականաց ցարուցած ամ-
բաստանութեան, որով կշանան փարդ անեալ
հաշակել ընտրութիւնը:

ՏԵՂԱՆԱԽԱՆԻՐԻ

Նահանգիս ընդհանուր կառավարիչ բարձրա-
Միտնալթ բաշա հասարակաց անդորրութիւնը
ապահովելու համար մեծ գործունէութեամբ կը
գրադի քաղաքիս ոստիկանութիւնը բանկեր-
դել եւրոպական ձևի վրայ: Տարակոյս չկայ որ
նորակարգ ոստիկանութիւնն ազգուայնէ պիտի
գործէ քաղաքացւոցս կեանքն ու գոյքը ան-
դորրելու համար յերեսաց բազմաոտեսակ մե-
քենայութեանց զորս չարագործք գիշեր և ցե-
րեկ ի գործ կը դնեն ամենայն յանգ դուռից:

— Ժամանակէ մը ի վեր կըլնուի թէ իշմի-
րէն Ալաշէհիլ գնացող երկաթուղւոյ հայաբանէն
որ քաղաքիս Պասմախանէ կոչուած փողոցին
մէջ է, մինչև կառավարութեան տպարանը, և
անկէ մինչև կէօղմէքէ գիւղը թրամվայի ուղի
չինելու ձեռնարկութիւն պիտի լինի: Այժմ
կ'իմանամք որ յիշեալ բազմադոտ շինութիւնն
յառաջացնելու համար հրաման և կարեւոր հրա-
հանդներ հաղորդուած են Բ. Գուռէն առ-
ջարձաւ կուսակալն մեր:

— Մէնիմէն գիւղաքաղաքի մէջ, որ բաւա-
կան բնակիչ և ի շրջակայն բազմաթիւ գիւղեր
ունի, մինչև ցայսօր Հիւսիսայնոց մի չգտնուե-
լուն մեր բարձրաւ կառավարին անաշխարհութե-
ւ ձեռնարկութեան շնորհիւ հասարակաց Հի-
ւանդանոցի մը հիմնարկութեան անաշխարհ քարը
գնելու հանդէսն կատարուեցաւ: Նոր կառու-
ցուելու հիւանդանոցին գետինն տէրութեան
կողմէ շնորհք եղած է և հովանուն ու զուար-
ճայի գիրք ունի: Հիւանդանոցն 40 անկողին
պարունակելու յարմար չէնք պիտի լինի:

— Գեր. Ս. Առաջնորդ Հայրն իւր այցելութեց
առիւթ թեմերու մէջ ի գործ դրած կարեւոր
իրողութեանց տեղեկագիրն ներկայացոյց Ազգ-
վարչութեան, յորմէ կ'իմացուի թէ 2 ամեւնա-
ւելի շրջագայած է ի թեմն: Իւր այց եղած տե-
ղերն են Մանիսայի վարի և վերի թաղերը Աք-
հիսար, Գրգաղաճ, Գընըք և Պերկամա: Այս
ամեն տեղերն թաղական խորհուրդներ հաս-
տատած է, եկեղեցեաց, դպրոցաց ելուստից
հին և կնճառի հաշիւներն քննած, և բարե-
կարգած է: Վաղեմի ազգամիտս վեճեր և կռիւ-
ներ խաղաղացած և ժողովուրդն իրենց դպ-
րոցաց օգտին ուշադիր լինելու և Ազգի օգտին
համար աշխատելու յորդորելով բարի շաղի
մէջ մտցուցած է: Մի րանի տեղուանք. որոց
եկեղեցւոյն քննեաց և վարժապետ պահելու
անբաւական են, ըստ սահմանադրութեան ազգ-
ային տուրք հաստատած է, աղքատիկ ժողո-
ւրդեան դիւրամտալի լինելու համար փոք-
րաթիւ գումարներ սահմանելով: Արժ. տէր Յով-
հանէս քահանայ Միմասեան որ իւր ուսմամբն
ու բարեհամբոյր փայլուն համայն ժողովրդեան
սիրելի եղած է, Գեր. Ս. Առաջնորդ Հօր այցե-
լութեանց ուղեկցելով թեմական կնճառի գոր-
ծողութեանց մէջ իբրեւ օգնական սպասուարած
է Ն. Սրբազնութեան:

— Ազգային վարչութիւնն իւր Ս. Նախագահին
հետ միասին ամենայն գործունէութեամբ կը շա-
րունակէ սովորոյ ջգ. հանդանակութեան, երու-
սաղէմի պարտուր բարձման քանձնածոյութեց և
Միացեալ բնկերութեանց կողմէ պաշտօնական
գրութեամբ անաշխարհեամ հանդանակու-
թիւններն յառաջ տանիլ, որչափ կարելի է, ի
բաց հասեալ թեմերն, որոց վիճակն օգնութե-
կան է, և որք շատ անգամ ի գործ ազգային
արկղէն օժանդակութիւն կը խնդրեն, նոյն իսկ
ի վերի փոքրաթիւ ազգայինք, որոնց ամենա-
մեծ մասն ի վերին երեսն տեսնուած բարեկե-
ցիկ վիճակին հակառակ դուրսէն կը փայլին ներ-
սէն կայրին, շատ տրամադիր չեն երկիր Պոլսէն
պահանջուած կամ անկալուած դուրսներն,
որոց համար ռուսներն տարապայման ծանրութիւն
մի է, իրելի արդեամբք պահել, համայն և
այնպէս Ազգ. վարչութիւնն դարձեալ իւր պաշ-
տօնական պարտքը կատարելու համար ամենայն
գործունէութեամբ կ'աշխատի որչափ կարելի է
արդիւնաւոր լինել յիշեալ բարեգործական
հանդանակութիւններն:

— Սպարթաքեան վեմաշուք Յովհանէս է-
ֆէնտին բնկերութեամբ Գեր. Ս. Առաջնորդ
Հօր անցեալ երկուշաբթի Ս. Մեսրոպեան աղբ-
վարժարանին, և հետեւեալ օրն Ս. Հռիփսիմ
եանց ազգային վարժարանին այցելութիւն ընե-
լով, և աշակերտաց ու աշակերտութեանց ուս-
մանքներն արդ. քննութենէ մ'անցունելով,
ազգային կրիին վարժարանաց ընդհանուր վի-
ճակին վրայ իւր մեծ գոհունակութիւնն յայտ-
նեց, և համակրական քաջալիք շնորհակալ եղան
և քաջալիքեց Ազգ. վարչութիւնն իւր Տնտեսա-
կան և Ուսումնական խորհուրդներով, նոյնպէս
վարժարանաց Տեսչութիւնն, և բոլոր պաշտօն-
եայք: Վեմաշուք Յովհանէս էֆէնտին ազգ.
վարժարանաց բարեկարգ ընթացից վրայ իւր
բնաբոյ հայրենասիրական զգացմանց համեմատ
այսպէս ուրախանալէ զինի իմանալով որ Ազգ.
արկղին վիճակն կարի յոյժ անձուկ է՝ բարեհա-
ճեցու 500 օսմանեան լիւրայ մշտնջենաւոր նուէր
յարձնել Ազգ. արկղին որոյ 0/0 8 տարեկան տո-
կոսն աղբ. բարեգործական հաստատութեանց
մատակարարուելու է ըստ կամաց վեհանձն բա-
րեւարին, զոր յետոյ պիտի յայտնէ Ազգային

վարչութեան:

Ազգ. Գաղաքական Ժողովն և Տնտեսա. խոր-
հարդն փութացին իրենց շնորհակալութիւնը
պաշտօնական ուղերձներով յայտնել առ Նորին
վեմաշուքին:

Սպարթաքեան վեմաշուք երրորդ վեհանձն
և անաստիւրո մեծագործութիւնք ինքնին
ներքողերունց լինելով հարկ չկայ որչափ գո-
վութեանց, Նոյն վարժարանութիւնն որչափ բան
չկրնար լինիլ բայց միայն որ ամեն Հայ ճամբորտ
աղբ. անէր լինի. այս է Նոյն միակ փափագը:
Երանի թէ հետեւ պիտի ունենային:

— Ի ներկայտանէ Ուսումնական և պատուելի
բարեկամ մի յուզարկեալ է մեղ մի նոր տես-
րակ, որ գովութեամբ և շնորհակալութեամբ
խօսի և վերահաստատուէ զերկասիրութիւնն ան-
ուսնեալ 2-րդ-3-րդ-4-րդ-5-րդ-6-րդ, որ յա-
ցերուն մաի ի յոյս բնծայեցաւ ի տպարանի Ար-
շալուայ Որարաթեան: Ըստ ինքնանայ յիշեալ ու-
սումնական և պատուելի բարեկամին մեր ևս ի
մեր կուտ մեծաւ հաճութեամբ մտադիր եմք
ի մօտոյ ի լոյս բնծայել զառաքեալն առ մեղ
նոր տեսակ որ ըստ անաշխարհ ի է ազգ. օգնու-
խորհրդածութեամբ և հայրենասիրական ըն-
գացմամբ:

— Նախքան թերթի ծանուցած էինք քա-
ղաքիս մէջ Արժ. անուն լրագրի մը նոր հրա-
տարակութիւնը. այժմ ստորդ. աղբիւրէ կ'իմա-
նամք թէ յիշեալ նոր լրագիրն իւր հրատարա-
կութեան անաշխարհ ամսոյն մէջ 1100 բաժանորդ-
ունեցեր է, իրողութիւն մի որ յոյն ազգի ըն-
թերցասիրութիւնը կրեւորեալ է, և մեր խմբա-
գիրներու և հեղինակներու նախանձելի կ'առ-
նայ: Մեր մէջ անեղբոր չապրութիւններն տա-
կաւին չեն ներքի որ Մեծ. Նորայր Բիւղանդաց-
ւոյ Գաղղ—Հայ. ընդարձակ բաժարանին բաժա-
նորդաց թիւը 825ն անդին անցնի, և ոչ Մաթի-
արագատիւ մամոյ փութասիրական գումարն
ամբողջանայ: Եօշակիլի մտակեր մի է այս, ո-
րուն մէջ այս երկու աղագ հայուն և յոյնն
ուսումնասիրական եռանդն կը տեսնուի:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԱմիՅՈՆ: Մեր վերջին թիւէն զինի 166 կողովք
վաճառեցան ի գին 205—220 դրոշի չէքին:

ԲԱՄՊԱԿ: Վաճառ. մունքն են գրեթէ 45 հակ
մեքենայուած կենդանի 365—377 դրոշի:

ԲՈՒՐԳ: Տէնիլիկի ապրանք 100 կենդանար
վաճառեցաւ վերջին եթեքեկիս մէջ ի գին 400
դրոշի կենդանարը:

ԾԱՆՈԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԶԱՅՈՑ

Գեղադրութիւն Հայկական, գրութիւն

Յովհ. Վասիլեան— Բ. Գրաւի մը ամբողջած:

Հեղինակին բաժնեմասն աշխատութեամբ, մեծ խը-
նակով և մարտի վրանդրութեամբ պատրաստուած
սոյն գեղադրութեան տեսարաններու Ա. և Բ. արկղն
հրապարակ եղած և միւսներն ալ մամոյ տակ են:

Այս տեսակ օգտակար գործ մը որ իւր տեսակին մէջ
առաջին անգամ լոյս կը տեսնէ ազգային հաստատու-
թեան մը ճեպար թիւ գերութեց կը տեսնուի, թէ գը-
րելու վայելչութեամբ և քիչ գնոյն ամենութեամբ
արժանի է որ մուտ գտնի ամեն ազգային վարժարանաց
մէջ: Իւրաքանչիւր տնտիր կը պարկանայ 25 լէշ և իւր
մէջ կը պարունակէ գեղադրական ծանօթութիւններ և
հրահանգներ ի պիտա ուսուցչաց:

Հատին գինն է 30 փարայ արծաթ գպրոցաց և 4005
տեղի աննորներու համար մասնաւոր զեղչ կը ըլլի:

Կեդրոնանդին է Միացեալ բնկերութեան գրասեն-
տակը Կ. Պոլիս, Ղաթիս, Կիսթէ օղլու խան թիւ 13:

Հոյն Միացեալ բնկերութեանց կնիքը

Չկող օրինակները անվաւեր են:

Տէր տպարոյս,

Գ. Վասիլեան Գ. Պալեաշէրեան:

ԲՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԼՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՅԻՆ